

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Պ Ի Ր

Ժի 230

ԵՐԵՎԱՆԻ

1869 ՅՈՒՆՎԱՐ 14

Ամեն օր կհրատարակուի: — Հասար 10 փարայ է: — Պօլիս բաժանորդ ըլլալ ուղղը մէկ արծաթ Մէճիս պիտի վճարէ 100 թուոց համար, իսկ գաւառաց մէջ 25 զրշ, դարձեալ 100 թուոց համար, թիցթատարութեան ծախքէ ազատ ըլլալով: — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար: — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոց վարի գրանը կից Նոր Գրատունը:

ԱՂԳԱՅԻՆ

Խառն ժողովոց անդամները երէկ Բ. Գուռը ժողովուրդեցան, վսեմ. Օսեան էֆէնտիէն հրաւիրուելով՝ ըստ հրամանի Նորին բարձրութեան մեծեղարքոս Ապի փաշայի:

Սակայն՝ Նորին բարձրութիւնը կայսերական պալատը գացած ըլլալով, հրաւիրեալք չեն կրցեր ներկայանալ, և հետեւաբար այս առար մնացեր է:

— Կլսեմք թէ՛ երէկ Սամաթիայէն պատգամաւորութիւն մը պատրիարքարան գացեր է, բայց խառն ժողովէն մարդ չգանուելուն համար ետ գարձեր են:

Այս պատգամաւորութիւնը կրացկանաց եղեր Սամաթիայ թաղական խորհրդէն, քահանայից գասէն և քարոզչէն:

— Յաւով սրտի կիմանաւք որ կիւրակէ օրը Գումբափուի մայրեկեղեցւոց մէջ դարձեալ յուզմունք մը տեղի ունեցեր է: Կլսեմք թէ ժողովրդեան մէջէն անանք պէտք եղած տեղը կանխաւ իննցուցեր են յիշատակութիւն չընել: Մէկ քանի շրհանակիրներու ներկայութիւնը աւելի յուզման պատճառ եղեր է: Կրտսի թէ, այս առարոս

յիշեալ եկեղեցւոյն մէջ Ս. Պատարագչէ մատուցուեր:

Լսածնուս նայելով, Պալատի և Սամաթիոց եկեղեցւոց մէջ Ս. Պատրիարք Հօր յիշատակութիւնը դադրեր է ժողովրդեան կանխաւ ազդարարութեամբը, որով յուզմունք չէ պատահեր:

— Մայրեկեղեցւոց Տ. Եղիշէ Աւագքահանայն Ռատիկանութեան կողմանէ կլինաուի եղեր:

ՆՆՐԻՆ ԼՈՒՐՆՐ

Մայրաքաղաքիս Լա թիւրքի Լըրագիրը գերմանական լրագրէ մը առնելով կհրատարակէ գաշնադրութեան մը քանի մը գլխաւոր կէտերը, որ կը կարծուէր թէ Ռուսիոց հետ Բրուսիա ըրած է:

1^o Եթէ Գաղղիա կամ Աւստրիա պաշտպանեն Տաճկաստան, և նիւթական մասին օգնեն, Ռուսիա և Բրուսիա կպարտաւորին պաշտպանել Յունաստանի՝ իրենց զէնքերովը:

2^o Բրուսիա գլխաւորական զօրութեամբ կպարտաւորի անդամաւոր ձեւ զԱւստրիա, այն միջոցին երբ Ռուսիա վաղաքից չ'ը սրչաւ է:

3. Առաջին նշանը արուածին պէս Ռուսիա պատերազմի համար պարտական է սուր հանել իւր հարստ սցին բանակը, և Ռուսիա ալ իւր կողմէն պատրաստ պիտի ըլլայ ճակատ մղելու, պէտք եղած վայրիկներն:

4. Գաշնակից կողմերէն և ոչ մէկը չպիտի կրնայ պատերազմ հրատարակել առանց գիտութեան դաշնակցին:

Երկու ըլլալու է այս դաշնակցին:

— Երկարօրոս անուն Յոյն լրագիրը որ մայրաքաղաքին մէջ կհրատարակուի, անուան մը համար խաբանուելէ զամ տու գննքի մ'ալ դատապարտուեր է յիշեալ լրագրոյն խմբագիրը:

— Կալէսի իշխանը և իշխանուհին գիտած որութիւն ունենալով յոռաշահից գործնան մէջ մայրաքաղաքս դալու, անդ դիական գետպանին խնդրով օտմանեան կտաւփորութիւնը արատնութիւն տուեր է յիշեալ իշխանը և իշխանուհին կրող Ֆրքաթնին նեղուցներէն անցնելու: Միանց ամեյն կյուսաց Ռ. Գոսոր, կրէ Լէյփնիթ կերարս պոյս լսրը հաղորդած է, թէ նոյն Ֆրքաթնը անգէն կըլլայ:

— Կհատաւան թէ Յունաստանին գունեք է Փարսիի գետպանածողովն որոշումները, որոնք Ռ. Գրան կողմանէ գրկուած վերջնագրոյն վրայ հիմնուելն:

— Ռուսներուց ներկայ պաշտօնէից հակառակ կուտակցութեան կողմանէ խնձեցք մը արուելով ի պատիւ Պ. Երաթիանօի, շատ մը աստեարանութիւններ եղեր են: Գետք է յիշել որ այս անձն նախորդ պաշտօնէից զլսին էր, և վերջին օրերս ժաղիլդական գումարան մը մէջ Յունաստանի նախատար աստեարանութիւն մ'ըրա:


— Մայրաքաղաքին Ռուս դեսպանը՝ ուրբաթ գիշերը ըստ սովորութեան շքեղ պարահանդէս մը տալով, Ռ. Գրան բարձրաստիճան պաշտօնեաներէն ամանք ներկայ դանուեր են:

Կիւրակէ օրն ալ դապրիական դեսպանին կողմանէ խիստ վտաւոր պարահանդէս մը արուեր է ինքիկայութեան Ռ. Գրան բարձրաստիճան նախարարաց և գիտաւոր դեսպանաց:

— Եւրոպական լրագիր մը կանգ է թէ Ռուսիա յայտներ է որ Ցաճկաստանի և Յունաստանի մէջ պատերազմ մը տեղի ունեցած ատեն չէզոք չկրնար մնալ:

— Բաթրի լրագիրը կճանուցանէ թէ Ռ. Գոսոր երկու դրահաւոր Ֆրքաթններ գներ է Վաղիսայն, և հրաման րրեր է շատ մը արագաչարժ նաւեր շինուելու:

— Երէս լրագիրը կրէ թէ Ռ. Գոսոր չըջտերական մը հեռագրեր է օտար ատրոթեանց քով ունեցած իր ներկայացուցչաց, որով կրնայնէ դեսպանածողովն որոշանց համար ունեցած գոհունակութիւնը, և Յունաստանի բռնած դիրքը որ ալ զայ իրատանց դէժ է, համաձայն հաւանութեան դեսպանածողովն դատապարտուելուն համար իւր վերջնագրոյն կէտ առ կէտ գործս դրութիւնը ետ պիտի ձգէ: Այս ելու թէ Ռ. Գոսոր գիտաւորութիւն չունի Յունաստանը նուաստացնել, և զալ պատերազմ բանալ:



ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԵՐ

Սպանիոյ Սեվիլ քաղաքին մէջ յունվարի սկիզբները խել մը բազմութիւն փառացները պատելով կեցցէ հառաքակաղեւտութիւն աղաղակիւր են, բայց անձաղդութիւն մը չէ պատահած: Եւ ուրիշ քաղաքի մը մէջ ալ խել մը մարդիկ խա մը խա մը եղած ու գեր են ձեռք

ձգել այս քաղաքին մէջ պահուած զէնքերը կամ յախշտակել ։ Բայց ֆապայէրօ զօրապետը վաշտ մը զօրք խրկեր է որ այս զէնքերը ֆատիքս փոխադրուին ։

— Մարակայի ապտամբութեան մէջ ձերբակալ եղողներէն 600 հոգի արձակուեր են ֆապայէրօ զօրապետին շնորհիւ ։ միայն անոնցմէ 230 հոգի մը նոցած են որ դատուին ։

— Յունկարի սկիզբները Լիզպօնի սպանիական դեպագանը ներկայացեր է Բորթուկայի թագաւորին , մատուցանելով իւր գրութիւնները ։

— Յիօրէնցայէն կղզին թէ աղօթեաց տուրքը իտալիոյ 37 նահանգաց մէջ գործադրուեր են , թէ և քանի մը նահանգաց մէջ ցոյցք եղեր են ։ Բարմոյի մէջ սրքան որ հանդարտութիւն կտիրէ , սակայն չըջագեղերը մեծ յուզմունք կայ , գեղացիք յարձակումներ ուզեր են ընել , սակայն զօրք հասնելով յանցաւորները բռնուեր են ։ Յիօրէնցայի նահանգին Սեբակօ քաղաքին դատարանին վրայ յարձակեր են գեղացիք , և գեղացի մը սարննուեր և շատեր վիրաւորուեր են սրահապան զօրքերէն ։

— Չմիւսնիոյ գաղղիական հիւպատոսը հինգ շարթի օրը ճամբաց ելաւ իւր պաշտօնին տեղը ։

— Բեղերսպուրիէն լուր կուտան թէ Ռուս պաշտօնակալ մի հրահէն մը հընարեր է որ մէկ փայրիկներն 200 անգամ կպարպուի և 30 տար անդ մը երկաթի կատարներով (սալքըմ) լեցնել ։ կրտսի թէ սոս հրահէնը 2,400 տար անդի մը վրայ երկաթի կատարներ կրնայ անգալ և աւելի մօտ հեռու որութեանց ատեն գործածուիլ ։ Այս զէնքին գործածելու եզանակը խիստ գիւրին է ։

— Պէրլինէն կղզին թէ նոր սար

ւոյն առթիւ բրուսիացի պաշտօնեայք և զօրապետք ներկայացեր են Բրուսիոյ թագաւորին ։ Վրանկէլ մարաշխատը կարճ ատենարանութիւն մը ընելով բոլոր զօրապետաց մաղթանքը յայտներ է . առ ատենախօսութեան մէջ կայ եղեր սա խօսքը « ուր է թէ Նորին վեհափառութիւնը իւր առաջադրեալ նըպատակին համար » ։ Թագաւորը պատասխաներ է խաղաղասիրական ատենախօսութեամբ , և աւելցուցեր է թէ ինք հաւատի է որ խաղաղութիւնը անվրդով պահուի , և կյուսայ որ հայրենեաց օգտին համար իւր նպատակին համար Պիլնարք կուտին գործակցութեամբ , որն որ զօրապետաց մէջ կը դանուէր ։

— Յիօրէնցայէն լուր կուտան թէ արտաքին գործոց պաշտօնէին ընդհանուր քարտուղարը Լոնտոնի գեապան պիտի ընտրուի ։

— Պարսկաստանի գաղղիական գեապանը Շահին հետ տեսնուած ատենը Եւրոպայի յառաջադիմութեան վրայ խօսք բացուելով , Նորին վեհափառութիւնը յայտներ է թէ կիսախաբի առաջիկայ դարնան Եւրոպա ուղեորութիւն մ'ընելու ։

— Մմերիկայի հասարակապետութիւնը Չինաստանի հետ դաշնագրութիւն մի ստորագրեր է , որով ամերիկացիք ազուտ պիտի ըլլան Չինաստանի մէջ բնակելու , — Չինաստանի կողմանէ հասարակապետութեան մէջ հիւպատոսներ պիտի դրուին ուրիշ տէրութեանց հիւպատոսներուն արուած արտօնութիւնները վայելելու արայմանաւ , — ամերիկացիք կրօնական աղատութիւն պիտի վայելեն , — Չինացոց թող պիտի արուի ուղած տեղերնին գալթելու , — երկու կողմանէ միօրինակութիւն

պիտի արուի չափերու և կշիռներու, —
Չինացիք պիտի ընդունուին Սմերիկացի
բոլոր գարոցներուն մէջ, և ամերիկա-
ցիք ազատ պիտի ըլլան Չինաստանի
մէջ ուզած տեղերնին դարոց բանա-
լու, — Սմերիկա միջամտութիւն չպիտի
ընէ Չինաստանի ներքին գործոց և հե-
ռազրի երկաթուղիի և ուրիշ այսպիսի
բաներու: միայն թէ Չինաստանէն ուզ-
ուած ասան Ամերիկայէն երկրաչափ-
ներ պիտի գրկուին՝ անոնց վարձը չի-
նական գանձէն վճարուելու պայմա-
նաւ:

Չինաստան այսպէս դրեթէ բոլոր
մեծ աէրութեանց հետ դաշնագրու-
թիւններ կընէ և օրինաւոր յարաբե-
րութիւն կհաստատէ:


—Սպանիոց մէջ քարոզութի դաւաճ
ցութիւն մը երեւան ելլելով շատ մը
մարդիկ բռնուեր և Պուրպօնեան Տօն
Քարթօի ստորագրութեամբ խել մը դը-
րեր ձեռք ձգուեր են: կերեւայ թէ
Քաթալոնի մէջ յուզմունք մը պիտի
պատճառի եղեր: Չհասկցուիր թէ այս
չափի դաւաճցութիւն տեղի ունենալով
ազատականները ի՞նչպէս բաժանեալ
կմնան:

—Մագդիսական լրտող իր մը կընէ թէ
Վաշինկթընի խորհրդարանը բանակցու-
թիւններ սկսած է ընել Սպանիոց կա-
ռավարութեան հետ, Քուպա կղզին մի-
այեալ: Նահանգաց ծախուելու հա-
մար:

—Չինաստանի դեսպանը յունիար
20ին Պ. Լուպաթթի տեսութեան դա-
ցեր է:

—Վիեննայէն կհետադրեն թէ Հէսի
իշխանը վիեննա գալով Աւստրիոց կոչ-
սեր հետ տեսութիւն մ'է ըրեր, և Ա-
ւստրիոց անտաքին գործոց պաշտօնեաց
Պ Պոյոթի հետ խօսակցեր է: Աս ևս

սակցութեամբ կյուսացուի Ռուսիոց
խաղաղադատիական քաղաքականութիւնը:
—Պրիւքսէլի թագաւորազն իշխանը
անցեալ դիշեր մեռեր է:



Պաղատացի իմամ մը մտա օրերս մայ-
րաքաղաքս եկած ըլլալով յանկարծ
ձիւնով լեցուած տեսնելով բոլոր փո-
ղոցները, դժուարը կուգայ, և դեղա-
գործի մը կերթայ որ ոտքերը չմրսե-
լու համար ճար մը սորվեցնէ. դեղա-
գործը կպատասխանէ թէ քիչ մը բո-
պիկ պտտելով կտաքնայ: Այս խրատը
միամտութեամբ կկատարէ իմամը, սա-
կայն մազ կմնայ որ ոտքը սառի, և
հազիւ տաք ջրի մէջ դնելով կարելի
կըլլայ հանգստանալ:

—Բորթուկալի աէրութեան կողմանէ
Պերլին գանուող դեսպանը իւր ապարա-
ւին մէջ ինքզինքը կախած գանուեր է:
Կկարծուի թէ այս անձնասպանութեան պատ-
ճառը դրամական կարօտութիւնը եղած է:

—Եգիպտոսի բարձր. Իբրաիմ Եգիպ-
տոս հրաւիրեր է Պրիւքսէլ գանուող երե-
ւելի լարախաղացներու խումբ մը: Ասոնց
ճամբու ծախքը Նորին բարձրութեան կող-
մանէ ամրող վճարուելէն դաս, իբրեւ
վարձ՝ 200 հազար ֆրանկ որոշուեր և յա-
տուկ շոգենու մը պատրաստուեր է Աղեկ-
սանդրիա բերելու համար:

—Սմերիկայի մէջ իզական սեռը մեծ
յառաջագիծութիւն կընէ գիտութեանց ու
արուեստից կողմանէ: Վերջին օրերս Նիւ
Եորքի մէջ բժշկական վկայագիր ստացեր
են իզական սեռէն 300ի չափ հոգի: Մէկ
քանի լրագրաց նայելով, ստանց մէջ այն-
չափ վարպետներ կան, որ տարին 30էն
մինչև 70 հազար ֆրանկ կընան շահիլ ե-
ղեր:

ՏՆՕՔԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Դ. Յ ՔԻԻ ԲՃԵԱՆ